

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ՏՕՆԱԿԱՆՔ ԵՒ ԲԵՄԱԿԱՆՔ

✱ 12 փետր. Եջ. — Սրբոց Վարդանանց Զորավարաց. — Ազգային այս տօնը Ս. Յակոբեանց Միաբանութեան մէջ, տօնը նկատուած է ժառանգաւորաց Վարժարանի սաներուն, ինչպէս Ս. Ստեփանոսին՝ Սարկաւազաց: Երէկ՝ նախատօնակին, այսօր՝ գիշերային ժամերգութենէն մինչև յաւարտ Ս. Պատարագի, աշխոյժ և հոգեռանդն երգեցողութեամբ, ժառանգաւոր սաները պանծացուցին իրենց տօնը, իրենց մէջէն իսկ ընտրուած դասապետներու առաջնորդութեամբ:

Ս. Պատարագը, Մայր Տաճարի Աւագ Խորանին վրայ, մատոյց ժառ. Վարժարանի և Ընծայաբանի Հոգեշնորհ Տեսուչ Տ. Եղիշէ Վրդ. Տէրտէրեան որ և քարոզեց, բնարան առնելով օրօտան չարկանէն՝ «Բամկանկան խումբ հաղարաց, որք ընդ նոսին նահատակեալք արխարապատեբարգմաւ, և հեղին զարկանս իւրեանց ի նորոգումն եկեղեցւոյ...»: Յոյց տուաւ նկարագիրը հայ ժողովուրդին համայնական պոռթկումին, դատին համար իր կրօնքին, հայրենիքին, իր եկեղեցիին, իր դոյութեան, Հերոսներ, սուրբեր, անսխիւք մարդեր էին անոնց առաջնորդները — գիտակցուած, իւրացուած զաղափարի մը պաշտպանութեանը համար զինուած էին ամէնքն ալ, ու կաղմեցին անմահ մէկ էջը իրենց ժողովուրդին արիւնոտ պատմութեան:

✱ 13 փետր. Ուր. — Սովորութեան համաձայն ամբողջ Միաբանութիւնն ու աշակերտութիւնը Ասորոց Ս. Մարկոս եկեղեցին դայցին, ուր Ս. Պատարագ մատուցուեցաւ, և քարոզեց Տ. Պարգե Վրդ. «Յամենայն ժամ աղօթս արարէք» բընաբանով. քայտարից աղօթքին գերն ու անհրաժեշտութիւնը, ունենալու համար հոգիի խաղաղութիւն, մտքի անդորրութիւն և սէր: Յորդորեց հետեւիլ փրկչի պատուէրին, աղօթելով անձանձոյթ ջերմեռանդութեամբ:

15 փետր. Կիր. — Բռն Բաւկենցան. երէկ, կիրակմտից ժամերգութեան միջոցին Մայր Տաճարին թողոր սեղանները և տէրուհական պատկերները վարագորութեան Այսօր, Աւագ Սեղանին վրայ մատուցուեցաւ առաջին վարագորեալ Ս. Պատարագը: Դպրապետութեան պաշտօնը վարեց Լուսարարապետ Դեր. Տ. Կիրեղ Ծ. Վրդ. առնթրեմակից ունենալով երկու հոգեշնորհ վարդապետներ, ինչպէս հնաւանդ սովորութիւնն է:

✱ 17 փետր. Դշ. — Այսօր կատարուեցաւ Մեծ Պահոց Հսկումի առաջին ժամերգութիւնը, որուն ընթացքին քարոզեց Ամեն. Ս. Պատրիարք Հայրը:

✱ 22 փետր. Բ. Կիրակի Մեծ Պահոց. — Արսաւման. երէկ, առաւօտուն, Ս. Պատարագը մատուցուած էր Ս. Թորոս եկեղեցիին մէջ, իսկ երեկոյն՝ «Հրաշափառ»ով հանդիսաւորապէս մուտքը կատարուած՝ Ս. Յարութենէն ներս, ուր, Հայոց Վերնատան մէջ, պաշտուեցաւ նաև երեկոյան ժամերգութիւնն ու նախատօնակը: Այսօր,

Առաւօտեան ժամերգութեան հետ, Ս. Պատարագը մատուցուեցաւ նոյն վերնատան մէջ: Իսկ Ս. Պատարագի աւարտումին, Քրիստոսի Ս. Դերեղմանին շուրջ, երկից զարձամբ, կաղմուեցաւ մեծ ժանդէս թափօր, հանդիսապետութեամբ Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր:

✱ 24 փետր. Դշ. — Հսկումին քարոզեց Ամեն. Ս. Պատրիարք Հայրը. «Դնաց մարդ ի տուն իւր յաւիտենից» բնարանով: Յոյց տուաւ թէ այս աշխարհի վրայ համարողներ ենք մենք: Երկու կարգի յաւիտենականութիւններ կան — երջանկութեան և Տառապանքի: Յորդորեց արթուն և զգաստ մնալ մեր կեանքին մէջ որդեկան հրեշտակի ձայնը սարսափ չպատճառէ մեզի երբ հնչէ ժողը:

✱ 27 փետր. Ուր. — Տեառնընդառաջ. տօնին առիթով, Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ: Քարոզեց Տ. Հայրիկ Վրդ. «Լոյս ի յայտնութիւն հեթանոսաց և փառք ժողովրդեան քում իսրայէլի» բնարանով: Կոյց տուաւ թէ Տեառնընդառաջը, որ հրեայ ժողովուրդին աղօթչին կեանքի մէջ մեծ հանդիսութեամբ կը տօնուէր, ունէր նաև իր հետ զաւաճաբար Մեծիայի մը, Փրկչի մը անմեռ յոյսին: Մարդկութեան զրկուած, անտարբեր, անիրաւուած տարբեր պիտի մտնեն ոլորտին մէջը այդ յոյսին, հոն հասնելու համար երջանկութեան իրենց բաղձանքին:

✱ 3 Մարտ Դշ. — Հսկումին քարոզեց Տ. Սեբուրէ Վրդ. «Զի որ ըստ Աստուծոյն տրամուծիւն է, աղաշխարութիւն փրկութեան գործէ» բնաբանով: Յոյց տուաւ վշտին, տրամուծեան երկու տարբեր — կործանարար և բարերար — հանգամանքները: Աստուածային նպատակ մը պէտք է տեսնեն, զգան մարդիկ ոեւ իրողութեան մը մէջ, որպէսզի երբ վիշտն ալ իբրև իրողութիւն մը մարդկային կեանքին մէջ այցելէ մեզի, դառնայ բարերար և դաստիարակչի:

✱ 8 Մարտ Կիր. — Տնկալի. Անձրեւոտ եղանակին պատճառաւ կարելի չեղաւ Համբարձման լիւ ելլել, ըստ սովորութեան, կատարելու համար նախորդ երեկոյան պաշտամունքները և Ս. Պատարագի մատուցումը: Ս. Յակոբի Մայր Տաճարին մէջ, վարագորեալ Ս. Պատարագ մատուցուեցաւ, և քարոզեց Տ. Նորայր Վրդ.: Տնտեսի առակին թելադրութեամբ յորդորելով հաւատացեալները արթուն եւ գիտակից ըլլալ միշտ իրենց կեանքին մէջ, լաւ տնտեսելով իրենց յատահուած ոեւ գործ, պաշտօն կամ հարստութիւն:

✱ 10 Մարտ Դշ. — Հսկումին քարոզեց Տ. Արթուր Վրդ. «Ունայնութիւն ունայնութեանց, ամենայն ինչ ընդ ունայն է» բնարանով: Յոյց տուաւ թէ Սովորման, իբրև թաղաւոր, իմաստուն, բանաստեղծ երգիչ ապրեցաւ կեանքը, իր բաղձազան երեսներու զեղեցկութեամբ, և սակայն ամէնէն յետոյ ինք է որ կը յայտարարէ Ամենայն ինչ ընդ ունայն է: Պարզեց կարգ մը տեսակէտները կեանքի ըմբռնումին — հաճոյքի, պարտականութեան գիտակցութեան, ունայնութեան — և յորդորեց որ իբրև քրիստոնեաներ

պարտինք կեանքը նկատել պարտականութեան գիտակցութիւն, մեղմիւում համար ունայնութիւնը այս աշխարհին:

✱ 15 Մարտ կիր. — Գաւառային, երէկ երեկոյ «Նրաշափառ»-ով հանդիսաւոր մուտքէն յետոյ, կիրակւորից ժամերգութիւնը եւ նախատեսակը կատարուեցաւ Ս. Յարութեան տաճարին կից հայապատկան Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիին մէջ: Այսօր, Գրիգորային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան նոյն տաճարին մէջ, իսկ Ս. Պատարագը՝ Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ, մատոյց Ամեն. Ս. Պատարագը Հայրը: Ս. Պատարագի աւարտումին, մեծաշուք թափօր կազմուեցաւ Ս. Գերեզմանին շուրջ, երիցս դարձաւ, հանդիսապետութեամբ Ամեն. Ս. Պատարարք Հօր, որ կենաց Խաչը ի ձեռին, կ'օրհնէր հաւատացեալ խառն բազմութիւնը: Դէպի վանք վերադարձին նոյնպէս թափօրով եւ «Որ պատուիրան» շարականը երգելով ամբողջ Միաբանութիւնը Պատրիարքարան եկաւ ուր, Ամեն. Ս. Պատարարք Հօր ձեռքէն ընդունեցաւ մէյ մէկ նշխար:

✱ 19 Մարտ եչ. — Հսկումին քարոզեց Գեր. Տ. Կիւրեղ Ծ. վրդ. «Դու գիտես զնախ իմ եւ զյառնել իմ...» բնաբանով: Յոյց տալէ յետոյ կարգ մը սխալ ըմբռնումները Աստուծոյ նախախնամութեան մասին, զայն նկատելով մարդոց կեանքովը հետաքրքրուող, մարդկութիւնը ինք իր բախտին ձգած աստուածութիւն մը, ճշգրէ ճշմարիտ ըմբռնումը Աստուծոյ պաշտօնարարին Աստուածաշունչով այնքան յստակօրէն յայտնուած:

✱ 22 Մարտ կիր. — Գաւառային, երէկ կէսօրէ յետոյ, Միաբանութեան եւ աշակերտութեան մէկ մասը Զիթենաց սարը բարձրացաւ, ուր կատարուեցան երեկոյեան, Հսկումի, Կիրակի օրուան գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւնները, եւ մատուցուեցաւ Ս. Պատարագ, մինչեւ գիշերուան ժամը 10ը: — Թեթեւ ամպերը արդէն իսկ թիպացեր էին իրիկնաղէմին, ու տեղատարաւ սաստկացեր: Գիշերն ամբողջ եւ այսօր անձրեւեց: Դժուարութեանց պատճառաւ, դարձաւ մաս մը միայն Միաբանութեան եւ աշակերտութեան լեռը գնաց ինքնաշարժերով թափօրով, Ս. Պատարագ մատուցանելու, իսկ ժողովուրդին համար Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցիին մէջ:

✱ 24 Մարտ Դչ. — Հսկումին քարոզեց Տ. Հայկազուն վրդ. «Տէր եթէ զընթուս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո» բնաբանով: Յոյց տուած թէ չսանձուած, չը զսպուած լեզուն ի՞նչ աւերներ կրնայ գործել մարդերու եւ ազգութիւններու կեանքին մէջ: Մինչդեռ լեզուն մէկ պարզին է Աստուծոյ, անով քալելու եւ բարձրանալու համար առաքելութեան ճամբէն, դէպի բարձունքը գերազոյն էին:

✱ 26 Մարտ եչ. — Հսկումին քարոզեց Ամեն. Ս. Պատարարք Հայրը, «Իբր հաւատարիմ մինչեւ ի մահ, եւ տաց քեզ զպսակն կենաց» բնաբանով: Պարզեց ճշմարիտ պատկերը Յիսուսի հաւատարմութեան, իր առաքելութեան պաշտօնին մէջ

իրբե զորովագութ հայր, բարի հովիւ, անձնդիր առաջնորդ, որ ոչ մէկ վայրկեան ընկրկեցաւ իր կեանքին եւ առաքելութեան պաշտօնին կատարմանը ընթացքին:

✱ 29 Մարտ կիր. — Ծաղկազարդ, երէկ երեկոյ հանդիսաւոր մուտքը եւ «Նրաշափառ»-ի արարողութիւնը կատարուեցան Ս. Յարութեան Տաճարի Հայկական վերնատան մէջ: Ուր պաշտուեցաւ նաեւ նախատեսակը Ծաղկազարդի — Այսօր, առաւօտ կանուխ, նոյն վերնատան մէջ, գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւններէն վերջ, մատուցուեցաւ Ս. Պատարագը, որմէ յետոյ մեծահանդէս թափօր կազմուեցաւ Քրիստոսի Ս. Գերեզմանին շուրջ. մոմեղէններ եւ արմաւենիներ ի ձեռին, Ըստ իրաւական սովորութեան, մեր թափօրին կը հետեւին Ղպտիներ եւ Ասորիներ, անոնք եւս թափօր կազմած: Այս հանդիսութեանէն յետոյ Միաբանութիւնն ամբողջ եւ աշակերտութիւնը խառն բազմութեան հետ, թափօրով վերադարձաւ Ս. Յակոբ, երգելով «Որ զխորհուրդ քո Գալստեան» շարականը:

Գոնքացէ. — Այս տարի ունեցանք զոհանուցիչ թիւով ուխտաւորութիւն մը եգիպտոսէն, Սուրիայէն եւ Պաղեստինի զանազան քաղաքներէն: Եւ այս երեկոյ, ի ներկայութեան ուխտաւորներու եւ ժողովուրդի բազմութեան, կատարուեցաւ Գոնքացի արարողութիւնը՝ խորհրդաւոր ու զան իրագործութեամբ: Վարագորուած բոլոր սեղանները, մատուռները, տէրունական պատկերները Ս. Յակոբայ Մայր տաճարին, բացուեցան ուխտաւոր եւ բնիկ հաւատացեալ խնդրամատոյցներու կողմէ: — Ըող. Տ. Հայկազուն վրդ. հրաւերկարողաց ներկայ հաւատացեալներուն մասնակցելու Ազունիէյի թոքախտաբուժարանի պատսպարեալներու ի նպաստ ամէն տարի այս օրին կատարուող հանդիսակութեան, յիշեցնելով այն խօսքը զոր Յիսուս պիտի ըսէ Դատաստանի օրը, իր արքայութեանը արժանի եղողներուն համար. թէ «Մերկ էի, հագուեցուցիք զիս, ծարաւ էի՝ ջուր, անօթի էի՝ հաց տուիք ինձի»: — Ամեն. Ս. Պատարարք Հայրը կատարեց Դանքացի տպաւորիչ արարողութիւնը, առնութեւր ունենալով Տ. Յովհաննէս վրդ. եւ Տ. Զաւէն Արեղան: Եկեղեցւոյ զոյգ զաներուն առջեւ զընուած պնակներուն մէջ ամէն ոք զբաւ իր լուսման, որպէսզի գոյացած գումարով Պաղեստինի Հայութիւնն ալ իր օժանդակութիւնը տուած ըլլայ ազգօգուտ հաստատութեան՝ Ազունիէյի թոքախտաբուժարանին:

✱ 2 Ապրիլ, Աւագ Հինգաբքի: — Նախորդ տարիներու նման կանոնաւորապէս կատարուեցան Ապոլիտարիոյ արձակման կարգը, Ս. Պատարագի մատուցումը (պատարագիչն էր Լուսաբարապետ Գեր. Տ. Կիւրեղ Ծ. վրդ.), Անճուայի կարգը, ի ներկայութեան ուխտաւոր եւ բնիկ խառն բազմութեան եւ բարձրաստիճան պետական պաշտօնակալներու: Արարողութիւնները ամէնքն ալ կատարուեցան զխաւորութեամբ Ամեն. Սրբազան Պատարարք Հօր:

Երեկոյեան ժամը 5.30ին, կազմուեցաւ եկե-

դեցական յատուկ թափօր, Ս. Հրեշտակապետաց եկեղեցիէն՝ առաջին քանգէն մեր փրկչին՝ զէպի Կայիափայ քահանայապետի տան տեղը, երկուրդ քանգը, Ս. Փրկչի մեղապատկան վանքը:

Ժամը Տէն մինչև կէս գիշերը անց, կատարուեցաւ Խաւարման գիշերի պաշտամունքը: Մեծ Հսկումի քարոզը խօսեցաւ Տ. Արթուր վրդ. «Եւ համբուրեաց զնա...» քնարանով: Դերկայացուց Զուգան իբրև խանդավառ հրեայ երիտասարդ մը, ազգային ազատագրման գաղափարներով տոգորուն, և որ սակայն յուսախաբ եղած ըլլալուն համար իր ակնկալութիւններուն մէջ մատնեց իր վարդապետը: Ու բաղդատութեան դրաւ նոյն գիշերուն մէջ տաղաւայտը երկու հոգիները, երկու եղբրեր տիեզերքին — մարդը և Աստուած — երկուքն ալ մինակ: Բայց Յուզան հարազատ եղբայրն է մարդերուն, որոնք ամէն օր ուրացումովը կ'ապրին իրենց հրազներուն, սկզբունքներուն, իրենց Աստուծոյն:

Ք 3 Ապրիլ, Աւագ Ուրբաթ: — Առաւօտուն՝ Խաչելուքեան կարգը, երեկոյին՝ Թաղման նախատեսակը կատարուեցաւ պատշաճ լըջութեամբ և հանդիսաւորութեամբ: Մայր Տաճարի դասին կեդրոնը յատուկ գերեզման մը պատրաստուած էր, ծաղիկներով, մոմեղէններով և այլ թանկարժէք իրեղէններով զարդարուած:

Ք 4 Ապրիլ, Աւագ Նախագի: — Պաշտօնական և իրաւական սովորութեանց համաձայն, Աւագ-Թարգման Տ. Հրազդան Արեղայ և քանի մը վարդապետներ, ընկերակցութեամբ Ս. Զարուսթեան Տաճարի խաւած զանապաններու, ժամը 9ին պաշտօնապէս գացին Ս. Զարուսթեան Տաճարին զուռները բանալու: — Ժամը 11.30ին պաշտօնական թափօրը, զխաւարութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր, ճամբայ կ'ելլէ, խուռն բաղմունքեան մը սեղմ գիծերուն մէջէն: Ժամը 1ին, Ս. Գերեզմանի դրան կնքումէն յետոյ՝ հայ և յայն երկու վարդապետներու ձեռքով, յայնեք թափօրի կ'ելլեն Գերեզմանին շուրջ: Մեր լուսանկար՝ Տ. Մուշեղ վրդ. Հայրապետեան, յունաց պատրիարքին հետ միասին կնիքը քակելով Ս. Գերեզման կը մտնեն, ուր միակ լուցեալ կանթեղէն իրենց մօմերը վառելով, կը փոխանցեն Գերեզմանի աջ ու ձախ կողմերը բացուած լուսամուտներուն քով սոստոյ «Լուսակիրներուն, որոնց խաւարն է իր թափօրի հանդիսապետին կը տանի Ս. Գերեզմանէն մատուցուած նուիրական լոյսը: Այս տարին ևս հայ «Լուսակիրները» ձեռքէ ձեռք փոխանցելով, վայրկեան մը ժամանակի մէջ լոյսը հասցուցին վեր՝ մեր վերնատունը, ուր, Ս. Գերեզմանին նայող պատշգամբէն, Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրը օրհնեց Գերեզմանին շուրջ հաւաքուած ուխտաւորութիւնն ու բաղմունքեան: Ապա հայերը թափօր կազմեցին Ս. Գերեզմանին շուրջ, զխաւարութեամբ լուսահան Տ. Մուշեղ վրդ. ի, Եպիսկոպոսական խոր ի գլուխն, ու ամբողջ ժողովուրդը զիրար կ'ողջունէր աւետելով՝ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց...»:

Ապա ամբողջ Միաբանութիւնը և ժողովուրդը, թափօրով ու երգով, նուիրական լոյսը իրենց

հետ, վանք վերադարձան: Ժամը 4ին մատուցուեցաւ ճրագալոյցի խորհրդաւոր ու յանկուցիչ իրիկնաղէմի պատարագը:

Ք 5 Ապրիլ, Չափիկ: — Կէս գիշերէն քիչ յետոյ, Միաբանութիւնը Ս. Զարուսթեան Տաճարը իջաւ: Առաւօտեան ժամնըգութեան սկիզբին՝ «Հարց»ին, ամբողջ եկեղեցական դասը, շուրջառաղպետ, մոմեղէններ ի ձեռին թափօր կազմած Ս. Գերեզմանին շուրջ, շարունակեց պաշտամունքը:

Ս. Պատարագը մատուցուեցաւ Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ: Պատարագեց՝ Եպիսկոպոսական խոր ի գլուխն, և քարոզեց, Տ. Գեորգ վրդ. «Յարեաւ Աստուած և ցրուեցան ամենայն թըշնամիք նորա» քնարանով: Յոյց տուաւ թէ Քրիստոնէութեամբ ու Քրիստոսով սրբացած ու նուիրականացած խաչը դարձած է անարգ գործըը համարուելէ, նոյնինքն Քրիստոսի Զարուսթեան իրողութեամբը: Ով որ կարենայ իր խաչը տանիլ համբերութեամբ, անկա պիտի գտնէ իր յաղթանակը՝ յարութիւնը:

Ս. Պատարագէն վերջ Միաբանութիւնը վանք վերադարձաւ, ճամբան թափօր կազմած երգելով «Քրիստոս Յարեաւ ի մեռելոց...»: Պատրիարքարանի լուսազարդ զանիւնը բարձրացան, ուր Ամեն. Ս. Պատրիարք Հայրը ընդունեց Զարուսթեան աւետիսը և օրհնեց ուխտաւոր ու բնիկ հայհասարակութիւնը, հայցելով Բարձրեալէն հօվանին իր աստուածային իմաստութեան ու բարութեան, անդորրութեանը համար մարդկութեան խռոված հոգիին:

Երեկոյին, Ս. Զակարեանց վանքի մեծ բակին մէջ տեղի ունեցաւ մեծահանդէս արարողութիւնը անդաւաճի, զխաւարութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր, և ի ներկայութեան խուռն բաղմունքեան՝ բակն ու տանիքները լեցուցած:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

Ք 6 Ապրիլ Բշ. — Հետեւալ անձնաւորութիւնները այցելեցին Պատրիարքարանս, ի շնորհաւորութիւն Ս. Զատիկի տօնին: —

Երուսաղէմի Նահանգային Կառավարիչ Վսեմ. Քիլիմ-Բօշ, ընկերակցութեամբ իր օգնականներուն և զխաւար պաշտօնատարներուն. — Վսեմ. Չիֆ. Սէքրէթարի կողմէ իր օգնականը՝ Րուհի Պէյ Ապրէլհատի. — Երուսաղէմի Անկիթքան Եպիսկոպոսը իր հետեւորդով. — Երուսաղէմի Եպիսկոպոսական Եկեղեցւոյ Դերկայացուցիչ Կանոնիկոս Հայր Պրիշմէն. — Իսլամական Բարձր Ժողովին Նախագահը երկու հետեւորդներով. — Հելլէն Պ. Հիւպատոսի կողմէ իր ղեւանապետը. — Ռուս Միաբանութեան Փոխարորդը իր հետեւորդներով:

Ք 7 Ապրիլ Գշ. — Ամեն. Ս. Պատրիարք Հայրը հետն ունենալով Լուսաբարապետ Կեր. Կիրեղ Ի. վրդ. և Միաբանութեան և Եթովպոսականներ, Ս. Զատիկի տօնին առթիւ շնորհաւորական այցելութիւն տուաւ Յունաց Պատրիարքարանը և

Ֆրանչիսկեաններու կիւսողտալին: — Նոյն օրը, միևնույն առթիւ Պատրիարքարանս այցելեցին հետեհալները: Պաղեստինի վսեմ, Բարձր Գոմիսերի կողմէ իր թիկնապահը: — Յունաց Ս. Պատրիարքը, երկու եպիսկոպոսներով և վարդապետներով: — Ղպտոց Ս. եպիսկոպոսը, իր Միաբանութեան անդամներով: — Ասորւոց Ս. եպիսկոպոսը, իր Միաբանութեան անդամներով: — Հայկաթոյիկաց Պատրիարքը: — Յոյն կաթողիկոսի փոխանորդը:

Իսկ յետ միջօրէի, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը հետն ունենալով Լուսարարապետ Գեր. Տ. Կիւրեղ Ի. Վրդ. և փոխադարձ շնորհաւորութեան այցելութիւն տուաւ Ռուս Միաբանութեան փոխանորդին:

✱ 8 Ապրիլ Դէ. — Պատրիարքարանս այցելեց Ֆրանչիսկեաններու կիւսողտը՝ Առաջաւորաց Ժողովի անդամներով, ի շնորհաւորութիւն Ս. Զատկի:

— Նոյն օրը, ի դիմաց Ամեն. Ս. Պատրիարք Հօր Հոգ. Տ. Գէորգ Վրդ. ձանազեան, հետն ունենալով Հոգ. Տ. Տ. Հայկազուն և Պարգե վարդապետները և Հոգ. Տ. Հրազդան Արեղան, շնորհաւորական փոխադարձ այցելութիւններ տուաւ Ղպտոց և Ասորւոց Ս. եպիսկոպոսներուն, Հայ կաթողիկոսի Պատր. փոխանորդին, Յոյն կաթողիկոսի փոխանորդին, Հայէջ Միաբանութեան Մեծաւորին, և Սիոնի Տօրմիսիոնի վանքի Մեծաւորին:

✱ 11 Ապրիլ Եր. — Երուսաղէմի Իրանեան Պ. փոխ Էկեպատոսը այցելեց Ամեն. Ս. Պատրիարք Հօր, ի շնորհաւորութիւն Ս. Զատկի:

✱ 15 Ապրիլ Դէ. — Ամեն. Ս. Պատրիարք Հօր այցելեցին Բրէթորիայի Անկիլիքան եպիսկոպոս Դեր. Վիլֆրիդ Պէթթը, և Դեր-Գնդապետ Ս. Ի. Հընտ Տէրզ:

Ո Ի Խ Տ Ա Ի Ո Ր Ն Ե Ր

Այս տարի, Զատիկան տօնու առիւ, հալառակ պատերազմի սեղմած տագնապին եւ նանապահորդական ոչ այնքան հեշտ պայմաններու, ունեցանք շուրջ 200 ուխտաւորներ. մեծաւ մասամբ եկած Սիւրիայէն եւ եգիպտոսէն:

Վանական վարչութեան կողմէն եղած կարգադրութեանց համեմատ, Աւագ Թարգման Տ. Հրազդան Աբեղայ եւ Տ. Արքուն Վրդ. Հաշիսեան առաջնորդեցին զանոնք Ս. Յարութիւն, Բերդեհեմ, Դերսեմանի, Համբարձման լեռ, Ս. Հրեշտակապետաց մենաստան, Ս. Փրկչի վանք, ապա Մեռեալ Ծով, Յուդան, Երիւզ եւ այլ սնորհական տեղերու սրբավայրեր. իւրաքանչիւր տեղւոյն վերաբերեալ սուրբգրական, ազգային եւ տեղական պատմութիւններն ու աւանդութիւնները պարզելով իրենց. ինչպէս նաեւ,

ի պահանջել հարկին ի Ս. Յարութիւն, ի Բերդեհեմ, եւ ի Յուդան, ուխտաւորաց յատկ հոգեւոր պատշաճութիւններ եւս կատարելով:

Մէկ կողմէն պատմութիւնը իր բանդակում ասուերենովը, միւս կողմէն, կրօնքը՝ իր սաւառնող խորհուրդովը, ներածօրէն խօսեցան անոնց հոգիներուն: Վանգի հոս, այս յաւիտեական փառքին մէջ, արուեստէն ու գիտութենէն աւելի կրօնքին միտքի բանաստեղծութիւնն է որ կ'իջնէ հոգւոյն խորը, ուր մարդկային սխաղոթութենէն աւելի աստուածային յայնութեան լոյսը կը նաւագայրէ:

Շնորհիւ Աւագ Թարգման Տ. Հրազդան Աբեղայի բարեացակամութեան, եւ Տ. Արքուն Վրդ. ի եղանակին ու պերնախօսութեան, մեր այս տարւան ուխտաւորները մեկնեցան աւելի քան գոհ եւ հրաճանքով անոնց բոլորէն որ յատկ է միայն Հայ Երուսաղէմին:

ՀԱՅ ԳԱՂՈՒԹՐ ԱՏԻՍ-ԱՊԷՊՈՅԻ ՄԷՋ

Ամեն. Ս. Պատրիարք Հայրը՝ Ասիս-Ապէլայի Հոգեւոր Հովիւ Արժ. Տ. Յովնանէս Քանանայ Կեփեռեանէ ստացած է 5 Մարտ 1942 թուակիր հետեւեալ նամակը, որ տեղեկութիւններ կը հաղորդէ Ասիս-Ապէլայի Հայ գաղութի ներկայ վիճակի մասին.

«1942 Ամանորի առթիւ շնորհաւորական հարբը եւ Ս. Երուսաղէմի գրպանի Օրացոյցն ստացայ թուականէս հինգ օր առաջ: Ամենապատուութեանդ հայրական օրհնութիւններն զօրավիզ եղան ծառայիդ, շարունակելու իր պատճօնը ներկայ հոգեկան տագնապի օրերուն մէջ:

Հայ գաղութս հիմա, ուրսուն եւ հինգ ընտանիք, հանգիստ ու հանգիստ կը գրաւին իրենց առօրեայ գործերով՝ Նորին Վեհափառութիւն Հայր Սեղասէ Կոյսեր հայրական հովանիին ներքէ: Առեւտրական գործեր այնքան զոհացուցիչ չեն ներկայիս, համայն աշխարհի ներկայ կացութեան պատճառաւ, որմէ մենք ալ մեր կարգին ազդուած ենք ուղղակի կամ անուղղակի: Սակայն եւ այնպէս, փառք Բարեբառին, ապրելու ամեն միջոցներ առատօրէն կան ու կը մնան: Ազգային Դեորգոօ Վարժարանը այս տարի կըրցանք բանալ հարիւր տասն Նախակրթարանի եւ Մանկապարտեզի աշակերտներով: Ազգային Սուրբ Դեորգ եկեղեցին, բոլորովին մեր տաճարութեան տակ, կը շարունակէ Սուրբ Ժամերգութիւնները, ի միաբարութիւն հաւատացելոց»: